ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

World Vision

ՀՀ ՄԿՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ՝ ՄԿՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ

Ներառական կրթության գաղափարախոսությունը Հայաստանում ներդրվել է, նախ և առաջ, որպես հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի և բոլորի ուսուցման հավասար հնարավորությունների ապահովման սկզբունքային մոտեցում: Սակայն դրա իրագործման շրջանակի և կազմակերպման պետական քաղաքականությունը աստիճանաբար փոփոխությունների է ենթարկվում, համապատասխանեցվելով կարգացող աշխարհում և միջազգային իրավական պրակտիկայում առկա լուծումներին:

Վերջին տասնամյակների ընթացքում ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ՝ խթանելու խոցելի սոցիալական խմբերի ներգրավվածությունը աշխատաշուկա և նրանց բարեկեցության բարձրացումը: Այսպես, ՀՀ կառավարության 2006 թ-ի հուլիսի 13-ի թ. 996 որոշման հիման վրա խթանվել է հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավումը աշխատաշուկայում: Այնուհետև, 2010 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, որի նպատակն է սատարել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մարդկային իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար ու հավասար իրացումը, ինչպես նաև հարգալից վերաբերմունքը նրանց արժանապատվության նկատմամբ: Այս կոնվենցիայի վավերացումը ենթադրում է, որ Հայաստանի Հանրապետությունն իր պատրաստակամությունն է հայտնում իրականացնել այնպիսի բարեփոխումներ, որոնք նորովի կլուծեն ներառականության կարիք ունեցող անձանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները և կնպաստեն վերոնշյալ անձանց հասարակական կյանքին լիարժեք ինտեգրվելուն:

Ուսումնասիրության համար ուղենիշ են հանդիսացել «Կրթություն բոլորի համար» հռչակագրի, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի և «Սոցիալական խարտիայի» պահանջները, որոնց միանալով Հայաստանը պարտավորվել է ապահովել կրթության հավասար հնարավորություն բոլորի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար: Իսկ «Կրթություն 30» Ինչհոյի համաձայնագրով՝ անդամ երկրները պարտավորվել են մինչև 2030թ. ապահովել կրթության մատչելիությունն ու որակը՝ բոլոր մակարդակներում:

Ինչպես բազմաթիվ հետխորհրդային երկրներում, Հայաստանում նույնպես մինչև 2005 թվականը ֆիզիկական ու մտավոր զարգացման խնդիրներ ունեցող անձանց համար իրականացվել են սոցիալական պաշտպանության և վերականգնողական ծրագրեր, որոնք *հիմնականում սահմանափակվում էին հաշմանդամի կարգավիճակ ունեցող անձանց սոցիալական և առողջապահական ծառայությունների տրամադրմամբ:*

2005 թվականը ՄԿՈՒ ոլորտի ներառական կրթության և քաղաքականության առումով նշանակալի էր այնքանով, որ ընդունվեց.

1) «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը, որով ներդրվեց «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ» հասկացությունը, ներառական կրթության գաղափարախոսությունը, կրթության բոլոր մակարդակներում սովորելու ազատ ընտրության, մատչելիության ապահովման երաշխիքները, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների գործարկման և երեխայի

կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման, վկայագրման, բարձրացված չափաքանակով ֆինանսավորման իրավահարաբերությունները և այլն.

2) «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվել են աշխատաշուկայային պահանջներին համապատասխան արհեստագործական և միջին մակարդակի մասնագետների պատրաստման, սոցիալական գործընկերության, կարողությունների ձևավորմանը միտված մոդուլային կրթության երաշխիքները և այլն:

Շուրջ 5 տարվա գործարկումից հետո, առկա փորձի հիման վրա, «Հանրակրթության մասին» օրենքի ընդունումով ուժը կորցրած համարվեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքը: Արդյունքում՝ համընդհանուր ներառականության քաղաքականությունը ներկայումս ներդրվում է հանրակրթության համակարգում, իսկ ՄԿՈՒ ոլորտում՝ ամրագրվել է յուրաքանչյուր երեխայի կարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն կազմակերպելու, նրանց սոցիալական հարմարեցում ապահովելու պայմանները:

Երկրում սոցիալական լիարժեք քաղաքականություն իրականացնելու համար անհրաժեշտ է սոցիալական կյանք ընդգրկել կարգացման խնդիրներ ու դժվարություններ ունեցող բոլոր անձանց՝ անկախ հաշմանդամության կարգավիճակից, այլ առանձնահատկություններից, շեշտը դնել նրանց հասարակական հարմարեցման, ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերման, կրթական, աշխատանքային, մասնագիտական գործունեության և ընտանեկան կյանքի պատրաստվածության ապահովմանն ուղղված միջոցառումներին:

Սակայն, ակնհայտ է, որ մինչ այժմ էլ սոցիալական խոցելի խմբերին պատկանող անձանց մեծ մասը դեռևս չի տիրապետում աշխատաշուկայում մրցունակ լինելու մասնագիտական կարողությունների և հմտությունների, որին նպաստում է նաև ՄԿՈՒ համակարգում նրանց ընդգրկվածության ցածր մակարդակը: Չնայած որ վերջին ժամանակաշրջանում դրական տեղաշարժ կա խոցելի խմբերի ներկայացուցիչներին, մասնավորապես հաշմադամություն ունեցող անձանց ՄԿՈՒ համակարգ ներգրավվելու առումով, սակայն առկա են մի շարք խնդիրներ, որոնք թույլ չեն տալիս ՄԿՈՒ համակարգին ամբողջական մոտեցում ցուցաբերել նրանց համար մեծածավալ կրթական ծառայություններ մատուցելու նկատմամբ՝ համընդհանուր ներառականություն ապահովելու համար: Այսպիսի իրավիճակը մեծամասամբ պայմանավորված է նաև նրանով, որ մինչ այժմ Հայաստանում լիարժեք չեն վերլուծվել և գնահատվել ներառականության ոլորտում կատարված օրենսդրական նախաձեռնությունները ու դրանից բխող հնարավոր բարեփոխումները, չեն վերհանվել առկա խոչընդոտներն ու հիմնախնդիրները ու չեն տրվել դրանց հաղթահարման ու լուծման ուղիները:

Չնայած այն հանգամանքին, որ կրթության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական մակարդակներում վերջին 10 տարիների ընթացքում մի շարք բարեփոխումներ են իրականացվել և աջակցության ծրագրեր են ներդրվել, սակայն ՄԿՈՒ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններն ու կազմակերպությունները մինչ այժմ էլ դժվարությամբ են արձագանքում փոփոխություններին կամ հաղթահարում առաջացած խնդիրները:

Հետազոտության նպատակն է բացահայտել, թե ինչպիսին են ՄԿՈՒ հաստատությունների հնարավորությունները և որքանով են նրանք ունակ իրականացնել բարեփոխումներ, որքանով են նրանք նախաձեռնող և հաջողած բարեփոխումների ծրագրերի իրականացման գործում,

ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ իրականացվող բարեփոխումները ներառականությունը ապահովելու և կրթության կազմակերպման արդյունավետության ու որակի բարձրացման վրա:

Չունենալով օրենսդրական որևէ սահմանափակում, ներառական կրթությունը լիարժեք չի իրականացվել մասնագիտական կրթության համակարգում: Մինչդեռ, մասնագիտական կրթության միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց կբաղվածության ապահովումն ամենահիմնարար լուծումներից մեկն է՝ նրանց համար հանրային կյանքում հավասար հնարավորությունների հասնելու համար: Հատկապես՝ արհեստագործական կրթությունը կարող է դառնալ ամենամատչելի և ամենահնարավոր տարբերակը՝ կրթության հատուկ պայմանների պահանջ ունեցող անձանց կբաղվածությունն ապահովելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը ստորև փորձ է արված ներկայացնել ՄԿՈՒ ոլորտում ներառականությանը միտված բարեփոխումները և խոչընդոտները, որոնց վերլուծությունը հնարավորություն կտա մշակել նորմատիվ փաստաթղթերի նախագծեր՝ հիմնված երկրի միջազգային պարտավորությունների վրա և հետագայում դրանք կիրարկել գործնականում:

Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի թիրախային վերլուծության միջոցով դիտարկվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն ստանալու օրենսդրական հնարավորությունները և խոչնդոտները: Այդ ուղղությամբ կատարվել են հետևյալ գործողությունները՝

1. ՄԿՈՒ ոլորտում ներառականության ապահովման ու դրա խնդիրների մասին տեղեկատվության ստացում:

2. ՄԿՈՒ ոլորտում ներառականության ապահովման միջազգային փաստաթղթերի և միջազգային պարտավորությունների վերլուծություն և համադրում հայաստանյան օրենսդրության հետ:

3. ՄԿՈՒ ոլորտում ներառականության ապահովման ուղղությամբ օրենսդրական և նորմատիվ այլ փաստաթղթերի նախագծերի մշակման առաջարկությունների փաթեթի ներկայացում՝ հիմնված ՄԿՈՒ ոլորտում ներառականության ապահովման ու դրա խնդիրների մասին ամբողջական տեղեկատվության վերլուծության և գնահատման վրա:

Սույն հետազոտությունը թույլ կտա ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ տեղեկանալ ՄԿՈՒ ոլորտում ներառականության ապահովման ու դրա խնդիրների մասին ամբողջական վիճակին, ինչպես նաև դրանք օգտագործել նոր ռազմավարական փաստաթղթի մշակման ու ՄԿՈՒ ոլորտում բարեփոխումներ իրականացնելու համար:

1

ՄԿՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒ ԴՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՄԿՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒ ԴՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՄԿՈՒ ոլորտում ներառականությանը միտված բարեփոխումների իրականացմանը խոչընդոտող խնդիրների մասին տեղեկատվություն ստանալու նպատակով մշակվել են համապատասխան գործիքներ և ընտրվել մեթոդներ: Մասնավորապես՝

1.1 Մշակվել է հարցաշար և անցկացվել են հարցումներ՝ ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական անձնակազմի շրջանում: Առաջադրված հարցաթերթի միջոցով խնդիր է դրվել բացահայտել հետևյալ հարցադրումները.

➡ Արդյոք հաշմանդամություն ունեցող մարդիկ իրավունք/ հնարավորություն ունեն ստանալ արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն:

➡ Որքանով է ներառումը համադրելի ՄԿՈՒ համակարգի հետ:

➡ Որո՞նք են հաշմանդամություն ունեցող անձանց համար մասնագիտական կրթություն և ուսուցում ստանալուն նպաստող ՄԿՈՒ հաստատությունների ուժեղ կողմերը:

➡ Որո՞նք են հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական կրթություն և ուսուցում ստանալու համար ՄԿՈՒ հաստատությունների թույլ կողմերը:

➡ Որո՞նք են ՄԿՈՒ հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական կրթություն և ուսուցում ստանալու արտաքին հնարավորությունները:

➡ Որո՞նք են ՄԿՈՒ հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական կրթություն և ուսուցում ստանալու արտաքին խոչընդոտները:

➡ ՀՀ ՄԿՈՒ ոլորտի առկա օրենսդրությունը հնարավորություն տալիս է արդյոք ՄԿՈՒ ոլորտում ներառականությունն ապահովելու համար:

Հարցման պատասխանների ամփոփիչ տեղեկանքը ներկայացված է հավելված 1-ով:

1.2 Ձևավորվել է 4 ֆոկուս խումբ և անցկացվել ուղղակի և զուգահեռ՝ առցանց քննարկում, որին մասնակցել են ՄԿՈՒ տնօրեններ (18 տնօրեն) և ՄԿՈՒ ՈՒՀ մանկավարժական աշխատողների (14 տեղակալ, մանկավարժ, մեթոդիստ) (մասնակիցների ցուցակները կցվում են): Քննարկման ընթացքում խնդիր է դրվել բացահայտել մասնակիցների վերաբերմունքը մասնագիտական կրթության և ուսուցման համակարգում ներառական կրթություն ներդնելու, կազմակերպելու և համապատասխան մեթոդաբանություն կիրառելու ունակությունները, դրանք խոչընդոտող հանգամանքները և այլ ածանցված հարցերը: Քննարկման ընթացքից պարզ է դարձել, որ մասնակիցների շրջանում առկա է տեղեկացվածության պակաս, քանի որ մոտեցումներն էականորեն տարբեր էին և խճճված: Իրավիճակից ելնելով, մասնակիցներին տրամադրվել է որոշակի տեղեկատվություն: Մասնավորապես՝

ա) բոլորի համար կրթության իրավունքի և մատչելիության ապահովման նախապայմանի, դրա էության մասին,

բ) ներառական կրթության գաղափարախոսության ու սկզբունքի, դրա կազմակերպման առանձնահատկությունների մասին,

գ) միջազգային պարտավորությունների և գործողությունների մասին,

դ) ներառականությունը, որպես կրթության կազմակերպման հիմնարար մեթոդաբանություն ներդնելու խնդրի մասին:

Դրանից հետո քննարկումն առավել կառուցողական, հիմնավորված և նպատակային շարունակություն է ունեցել:

1.3 Անցկացվել է խորհրդատվական առցանց հանդիպում հաշմանդամություն ունեցող երիտասարդության շրջանում (07.08.2020թ.), որը հնարավոր էր դարձել «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության նախաձեռնած՝ «Լսելի դարձնել հաշմանդամություն ունե-ցող անձանց ձայնը Հայաստանի զարգացման օրակարգում» ծրագրի շրջանակներում: Հանդիպումը անցկացվել է զրույց-քննարկում և հարց-պատասխան ձևաչափով: Հարցադրումնե-րը հիմնականում առնչվել են հաշմանդամություն ունեցող անձանց նախնական մասնագիտական (արհեստագործական) և/կամ միջին մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի և դրա իրատեսականությունը խոչընդոտող հանգամանքների հետ: Մասնավորապես՝

ա) մասնագիտությունների և ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում կրթության կազմակերպման առանձնահատկությունների մասին տեղեկացվածության պակասը,

բ) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց առանձ-նահատկությունների դիտարկումը մասնագիտական կողմնորոշման ծառայություններում,

գ) ՄԿՈՒ ընդունելության համակարգում անհավասար մրցակցությունը, հատկապես՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության մակարդակում,

դ) մասնագիտական կրթության ծրագրերի հաղթահարելիության բարդությունը և ճկունութ-յան պակասը, այդ թվում՝ ժամային գրաֆիկը,

ե) հեռավար կրթության կազմակերպման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց դժվարությունները,

զ) մանկավարժական անձնակազմի մեթոդաբանական և մանկավարժահոգեբանական հմտությունների պակասը, ինչը հաճախ հանգեցնում է ոչ թե իրական կրթության, այլ ձևական պրոցեսի,

է) շենքային պայմանների անհամապատասխանությունը սահմանված չափանիշներին,

ը) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և կրթության առանձ-նահատուկ պայմանների բացակայությունը ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում և այլն:



1.4 Անցկացվել է կրկնակի առցանց հանդիպում (25.09.2020) ՄԿՈՒ ոլորտի շահառուների հետ, քննարկելու համար այն հնարավոր լուծումները, որոնք նախատեսվում է առաջադրել հետազոտության արդյունքում: Մասնակիցների նախորդ կազմը համալրել էին 8 ՄԿՈՒ ՈՒՀ, այդ թվում՝ 4-ը Վորդ Վիժին կազմակերպության այլ ծրագրի մասնակից: Մասնակիցների ցանկը ներկայացվում է հավելված 3-ով:

Հանդիպման ընթացքում տեղի է ունեցել մտքերի փոխանակություն և ձեռք է բերվել նախնական համաձայնություն՝ օրենսդրական կարգավորումների ուղղությամբ: Հանդիպումը հնարավորություն տվեց առավել հիմնավոր մոտուցում ունենալ հետազոտությունում ներկայացված առաջարկությունների հարցում, ինչպես նաև բացահայտեց այն խորը մտահոգությունները, որոնցով պայմանավորված, մասնակիցների գնահատմամբ՝ առանձին հարցեր չպետք է դրվեն «հավասարության նժարին»: Մասնավորապես՝

ա) արհեստագործական կրթության որոշակի մասնագիտությունների համար պետք է սահմանափակվի մտավոր և ֆիզիկական խորը հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը,

բ) մասնագիտությունները պետք է տեսակավորվեն և նախատեսվեն կամ արգելվեն կոնկրետ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այսինքն՝ մասնագիտական ընտրությունը պետք է կապված լինի «կարգավիճակից և հաշմանդամությունից»: Օրինակ՝ «մտավոր հետամնացության» դեպքում արգելել խոհարարությունը և այն մասնագիտությունները, որոնց արդյունքում կարող է սովորողը վնաս հասցնել իրեն, ընկերներին և սպառողին (պրակտիկայի ժամանակ),

գ) նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծրագրով ուսումնառող ԿԱՊԿՈՒ երեխայի համար պարտադիր չհամարել միջնակարգ կրթության 3-րդ մակարդակի ծրագիրը. անցնել միայն մասնագիտական մոդուլները, կամ ընդունել միայն միջնակարգ կրթության հիմքով,

դ) ընդունելության ժամանակ սահմանել արտոնություններ, հատկապես՝ արհեստագործական կրթության դեպքում և այլն:

Նշված բոլոր հարցադրումները հակասում են ներառականության գաղափարախոսությանն ու միջազգային պարտավորությունների դրույթներին: Սակայն, այդ մոտեցումները միայն կարծարտիպերի և վատ իրազեկվածության հետևանք չեն: Դրանք ներկայիս ներառական կրթության թույլատրելի, բայց իրագործման որևէ մեխանիզմից զուրկ համակարգի հետևանք է, ինչը պատասխանատու թիմերի համար, առաջին հերթին ընկալվում է ռիսկային ու մտահոգիչ գործոն: Բնականաբար՝ առողջ մեկնարկած գործընթացի, իրազեկվածության բարձրացման, մեթոդաբանական խորհրդատվությունների արդյունքում մտահոգությունները աստիճանաբար կվերափոխվեն:

1.5 Ուսումնասիրվել է մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև հանրակրթության ոլորտում համընդհանուր ներառականության սկզբունքի ներդրման գործընթացի փորձը, ԿԱՊԿՈՒ անձանց աշխատանքային իրավունքի ապահովման վիճակը և այլն:

Վերոնշյալ մեթոդաբանության և կիրառված գործիքների միջոցով ձեռք բերված տեղեկատվության վերլուծության միջոցով հնարավոր է դարձել գնահատել ՄԿՈՒ ոլորտում ներառական կրթության ապահովման իրատեսականությունն ու խոչընդոտները, ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների կողմից դրա կազմակերպման հիմնահարցերը: Այդ նպատակով կիրառվել է **SWOT վերլուծության մեթոդը:** Այսպիսով՝

Արտաքին միջավայրում (ՀՀ ՄԿՈՒ ոլորտում) առկա հնարավորությունները, որոնք կարող են նպաստել ներառական կրթության իրականացմանը,

- առկա է ներառական կրթության գաղափարախոսությունը և միջազգայնորեն սահմանված նախապայմանները ապահովելու քաղաքական պարտավորվածությունը,
- առկա է ներառական կրթության ներդմանը միտված պետական քաղաքականությունը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավահավասարությունն ապահովելու, սատարելու քաղաքական կամքը,
- Հանրակրթության ոլորտում ներդված է համընդհանուր ներառական կրթության քաղաքականությունը՝ մինչև 2022 թվականը, իսկ ՄԿՈՒ ոլորտում սահմանված են կրթության առանձնահատուկ պայմաններ ապահովելու միջոցով կրթության կազմակերպման պայմանը,
- յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձ, ազատ է ընտրել մասնագիտություն և ուսումնական հաստատություն՝ ըստ իր նախասիրությունների ու զարգացման առանձնահատկությունների,
- ՄԿՈՒ ոլորտի մասնագիտությունները իրականացվում են կարողությունների զարգացմանը միտված մոդուլային ուսուցման ծրագրերով, ինչը ենթադրում է յուրաքանչյուրի հետ անհատական աշխատանք և յուրաքանչյուրի կողմից բոլոր արդյունքների ձեռք բերում,
- Մասնագիտական կրթության բոլոր չափորոշիչները, մոդուլային ծրագրերը և ուսումնական պլանները մշակվում են սոցիալական գործընկերների հետ և դրանցում հաշվի են առնում աշխատաշուկայի պահանջները,
- Հայաստանում գործարկվում է աշխատանքի վրա հիմնված ուսուցման մոդելները, որոնք կարող են բարձրացնել մասնագիտական աշխատանքի հետագա հնարավորությունները
- հաշմանդամություն ունեցող անձանց կրթական խնդիրները լուծելու գործընթացներում քաղաքացիական հասարակության և որոշ միջազգային կազմակերպությունների ակտիվությունը, այդ ոլորտում նրանց համագործակցությունը ՀՀ պետական լիազոր մարմինների հետ,
- ներառական կրթության իրականացման հանրապետական և միջազգային փորձի առկայությունը, տեղայնացված ծրագրերը և այլն:

Արատաքին միջավայրում (ՀՀ ՄԿՈՒ ոլորտում) առկա խոչընդոտները, որոնք կարող են ռիսկային դարձնել ՄԿՈՒ ոլորտում ներառական կրթության արդյունավետ իրականացումը.

- ՄԿՈՒ ոլորտի օրենսդրության և մեթոդական փաստաթղթերի մեջ ներառական կրթություն ապահովող իրավահարաբերությունների կանոնակարգման ոչ բավարար հիմքերը,
- ՄԿՈՒ կրթության ֆինանսավորման բանաձևի բացակայությունը, այդ թվում՝ կոնկրետ մասնագիտության արժեքի հաշվարկումը և բարձրացված չափաքանակով ֆինանսավորում չնախատեսելը,
- Պետական բյուջեի սղությունը և մասնագիտական կրթության մեջ ներդրվող ֆինանսական

միջոցների անբավարարությունը,

- ՄԿՈՒ ոլորտում, ոչ օրենսդրությամբ, ոչ ՈՒՀ-ների նախաձեռնությամբ մասնագիտացված ծառայությունների համակարգի ներդված չլինելը, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները և օգնականի հաստիքը՝ նույնիսկ հիմնական կրթության հիմքով միջնակարգ կրթության 3-րդ մակարդակի ծրագիրն ուսումնառող սովորողների պարագայում,
- ՄԿՈՒ ՈՒՀ-ներ ընդունելության ներկա գործընթացի որոշակի դժվարությունները՝ կապված մասնագիտական կողմնորոշման, միավորների միջին գործակցով մրցույթը չհաղթահարելու, նախնական մասնագիտական կրթության մակարդակում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ընդունելության որևէ արտոնություն չսահմանելու, երկկողմանի կարծրատիպերի, զգուշավորության և այլ հանգամանքների հետ,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, դպրոցից մասնագիտական կրթություն ուղղորդելու և ուսուցման մեջ ներգրավման համակարգային աշխատանքի բացակայությունը,
- պետական մակարդակով ՄԿՈՒ մանկավարժական և վարչական անձնակազմի պարտադիր վերապատրաստման պայմանի և պլանավորված կարողությունների ուսուցանմանը միտված ծրագրերի կազմակերպման բացակայությունը, այդ թվում՝ ներառական կրթության մեթոդոլոգիաների կիրառման հմտությունները,
- ՄԿՈՒ ՈՒՀ-ների շենքային պայմանների, ուսումնաարտադրական տարածքների և պրակտիկաների կազմակերպման աշխատանքային տարածքների անհամապատասխանությունը՝ ունիվերսալ դիզայնի չափանիշներին: Օրինակ՝ բացակայում են թեքահարթակները և վերելակները, իսկ սանհանգույցները, դասասենյակները, կաբինետները, լաբորատորիաները, արհեստանոցները, սպորտային դահլիճները, սննդի կազմակերպման վայրերը հարմարացված չեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին և այլն:
- ՄԿՈՒ ՈՒՀ-ներում կրթության առանձնահատուկ պայմանների, այդ թվում՝ ուսումնառության և դասավանդման նյութերի, տեխնիկական միջոցների և նյութատեխնիկական պայմանների, մատչելիության սահմանափակ հնարավորությունների հետ,
- աշխատատեղերի հարմարեցված չլինելը հաշմանդամություն ունեցող անձանց կրթության և աշխատանքի առանձնահատուկ պայմանների կարիքներին,
- գործատուների մոտ առկա կարծատիպերը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ, գործատուների վատ իրազեկվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների, նրանց հնարավորությունների, պետական աջակցման ծրագրերի մասին,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց և նրանց ընտանիքների շրջանում գրեթե չեն իրականացվում մասնագիտական կրթության հնարավորությունների և հասանելիության վերաբերյալ տեղեկացվածությունը բարձրացնելու ուղղությամբ միջոցառումներ, ինչի արդյունքում ցածր է հաշմանդամություն ունեցող անձանց պատկերացումները և մասնագիտական կրթություն ստանալու հետաքրքրվածությունը և այլն:

Ներքին միջավայրում (ուսումնական հաստատությունների) առկա ուժեղ կողմերը, որոնք կարող են նպաստել ներառական կրթության իրականացմանը.

- ՄԿՈՒ ՈՒՀ-երը հիմնականում պատրաստակամ են հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական կրթությունն ապահովելու գործում՝ հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման գործընթացներում կիրառելով նաև ներառական կրթության ապահովման համար անհրաժեշտ սկզբունքները,
- մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված պետական կրթական չափորոշիչները և մոդուլային ուսումնառության ծրագրերը հնարավորություն են տալիս ՄԿՈՒ ՈՒՀ-ներին աշխատել յուրաքանչյուր սովորողի հետ՝ հաշվի առնելով նրա զարգացման առանձնահատկությունները,
- ունեն կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան շատ թե քիչ բավարար նյութատեխնիկական հագեցվածություն՝ ուսանողների ուսումնական պրակտիկաները և գործնական ուսուցումը ուսումնական հաստատության արհեստանոցներում, լաբորատորիաներում անցկացնելու համար,
- հնարավորություն ունեն ուսանողների մասնագիտական ուսուցումը կազմակերպել և իրականացնել գործատուների մոտ՝ այդ թվում և անհատական ուսուցման եղանակով (վարպետային ուսուցում),
- առկա են ներառական կրթության սկզբունքների մասին իրազեկված, հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքի մեթոդներին որոշակիորեն տիրապետող մանկավարժական և վարչական անձնակազմ՝ միջազգային և տեղական ծրագրերի շրջանակում վերապատրաստվելու արդյունքում,
- բոլոր ՄԿՈՒ ՈՒՀ-ներում գործում են կարիերայի կենտրոններ:



Ներքին միջավայրի (ուսումնական հաստատությունների) թույլ կողմերը, որոնք կարող են խոչընդոտել ներառական կրթության իրականացմանը,

- ՄԿՈՒ ՈՒՀ-ները ֆինանսապես ունակ չեն ինքնուրույն հարմարեցնել շենքային պայմանները հաշմանդամություն ունեցող անձանց կրթությունն ու ուսուցումը կազմակերպելու համար, իսկ նրանց ֆոնդհայթայթման ջանքերը արդարացված չեն,
- նյութատեխնիկական բազան և ուսուցման միջոցները լիարժեք հագեցած չեն ժամանակակից սարքերով, սարքավորումներով, գործիքներով, որոնք կարող են մեծացնել ԿԱՊԿՈՒ անձի դասապրոցեսին մասնակցության հնարավորությունները,
- դասախոսական կազմը և վարպետները տեղեկացված չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հետ աշխատելու մեթոդաբանությանը, նրանք չեն անցել համակարգված նպատակային վերապատրաստումներ,
- հանրակրթության մեջ ընդգրկված և ԿԱՊԿՈՒ գնահատում անցած անձանց անհատական ուսուցման պլանները չեն փոխանցվում ՄԿՈՒ ՈՒՀ, իսկ վերջիններս պատրաստ չեն մշակել իրենց սովորողի անհատական ուսումնական պլանը և աշխատել դրանով,
- հիմնականում բացակայում են ներառական կրթությունն արդյունավետորեն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագետները (հատուկ մանկավարժ, հոգեբան, սուրդոմանկավարժ, էրգոթերապիստ, սոցիալական աշխատող, այլն), չեն համագործակցում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների հետ,
- ուսումնական հաստատություններն ինքնուրույն դժվարանում են կարգավորել հաշմանդամություն ունեցող անձանց ուսուցանման հետ կապված հոգեբանական, ներանձնային, միջանձնային (համակուրսեցիներ, հասարակություն) հարաբերությունները, նրանց սոցիալականացման խնդիրները,
- բացակայում է մասնագիտությունների դասավանդման և գործնական ուսուցման գործընթացը կազմակերպելու առանձնահատկությունները բնորոշող և աշխատանքի առանձնահատկություններով պայմանավորված՝ գործատուների հետ պրակտիկաների ապահովման մեթոդական ցուցումները,
- ներառական կրթության իրականացման գործընթացներում բացակայում է միջուսումնական համագործակցությունը կամ այն շատ սահմանափակ է:

2

ՄԿՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԻ ԵՎ ՀՀ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

ՄԿՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԻ ԵՎ ՀՀ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Կրթության զարգացման միջազգային տեսլականը և ՀՀ օրենսդրության բարեփոխումների անհրաժեշտությունը՝ ՄԿՈՒ ներառականության համատեքստում

Բոլորի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց, հավասար կրթության ապահովման նախադրյալները և ՄԿՈՒ ոլորտում ներառական կրթության ներդրման սկզբունքային ուղղությունները դիտարկելու նպատակով վերլուծենք մի շարք միջազգային փաստաթղթերի կարգավորումները և ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների ուղղությունները: Այսպիսով՝

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, որը 2010*թ. վավերացրել է Հայաստանի Հանրապետությունը* 24-րդ *հոդվածով ամրագրել է հետևյալը.*

Հոդված 24. Կրթությունը

1. Մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը: Այս իրավունքն առանց խտրականության և հավասար հնարավորություններով իրականացնելու համար, մասնակից պետություններն ապահովում են կրթության բոլոր ոլորտները ներառող համակարգը բոլոր մակարդակներում, ինչպես նաև՝ կրթությունը ամբողջ կյանքի ընթացքում՝ ուղղված.

ա) մարդկային ներուժի և արժանապատվության ու ինքնագնահատման լիակատար զարգացմանը, ինչպես նաև մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների ու մարդկային բազմազանության նկատմամբ հարգանքի ամրապնդմանը.

բ) հաշմանդամություն ունեցող անձանց անհատականության, տաղանդի ու ստեղծագործական մտքի զարգացմանը, ինչպես նաև նրանց մտավոր ու ֆիզիկական կարողությունների զարգացմանը՝ օգտագործելով նրանց առավելագույն հնարավորությունները.

գ) հնարավորությունների ստեղծմանը, որի արդյունքում հաշմանդամություն ունեցող անձինք արդյունավետ կերպով մասնակցություն կունենան ազատ հասարակության կյանքում:

2. Սույն իրավունքն իրականացնելիս մասնակից պետություններն ապահովում են, որ.

ա) հաշմանդամություն ունեցող անձինք չմեկուսացվեն ընդհանուր կրթական համակարգից հաշմանդամության պատճառով, և որ հաշմանդամություն ունեցող երեխաները չզրկվեն անվճար ու պարտադիր՝ տարրական կամ միջնակարգ կրթություն ստանալու իրավունքից հաշմանդամության պատճառով.

բ) հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի լինի համակողմանի, որակյալ ու անվճար՝ տարրական ու միջնակարգ կրթությունը համայնքի այլ անդամների հետ հավասար հիմունքներով.

գ) տրամադրվեն անհատի պահանջներին անհրաժեշտ հնարավորություններ.

դ) ընդհանուր կրթական համակարգում հաշմանդամություն ունեցող անձինք ստանան ան-

հրաժեշտ աջակցություն՝ իրենց արդյունավետ ուսուցումն ապահովելու նպատակով.

ե) ձեռնարկվեն անհատական աջակցությանն ուղղված արդյունավետ միջոցներ այնպիսի միջավայրերում, որոնք ամբողջությամբ ներգրավելու նպատակն իրականացնելուն զուգահեռ նաև առավելագույնս կնպաստեն նրանց ուսումնական ու սոցիալական զարգացմանը:

3. Մասնակից պետությունները պետք է հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն տան սովորելու կյանքի ու սոցիալական զարգացման հմտությունները՝ աջակցելով նրանց լիակատար ու հավասար մասնակցությանը կրթական համակարգում ու հասարակական կյանքում՝ որպես լիիրավ անդամներ: Այս նպատակով մասնակից պետություններն իրականացնում են անհրաժեշտ միջոցառումներ, այդ թվում.

ա) նպաստելով Բրայլի համակարգի, այլընտրանքային տառատեսակների, հաղորդակցության ուժեղացուցիչ ու այլընտրանքային միջոցների ու ձևաչափերի, ինչպես նաև կողմնորոշման և շարժունակության հմտությունների ուսուցմանը, նաև հասակակիցների կողմից աջակցության ցուցաբերմանն ու ուղղորդմանը.

բ) նպաստելով շարուձևերի լեզվի ուսուցմանը և խուլերի լեզվական ինքնությանը.

գ) ապահովելով, որ կույր, խուլ կամ կույր ու խուլ անձանց, մասնավորապես երեխաների ուսուցումը կատարվի տվյալ հաշմանդամություն ունեցող անձի համար ամենահարմար լեզվով, հաղորդակցության մեթոդներով ու միջոցներով և այնպիսի միջավայրում, որն առավելագույնս կնպաստի ուսումնական ու սոցիալական զարգացմանը:

4. Որպեսզի ապահովվի այս իրավունքի իրականացումը, մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ներգրավելու համար շարժուձևերի լեզվի և/կամ Բրայլի համակարգի որակավորմամբ ուսուցիչների, նաև՝ հաշմանդամություն ունեցող ուսուցիչների և դասընթացներ կազմակերպելու կրթական համակարգի տարբեր մակարդակներում աշխատող մասնագետների ու անձնակազմի համար: Այդ դասընթացները ներառում են իրազեկում հաշմանդամության հիմնահարցերի շուրջ և հաղորդակցության ուժեղացուցիչ ու այլընտրանքային համապատասխան միջոցների ու ձևաչափերի օգտագործում, կրթական տեխնոլոգիաներ ու նյութեր՝ նպատակ ունենալով աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց:

5. Մասնակից պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց առանց խտրականության ու մյուսների հետ հավասար հիմունքներով մատչելի լինեն ընդհանուր բարձրագույն կրթությունը, մասնագիտական կրթությունը, մեծահասակների ուսուցումը և կըրթությունը ամբողջ կյանքի ընթացքում: Այս նպատակով մասնակից պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվեն անհրաժեշտ հնարավորություններ:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի արձանագրային որոշումներում և 24.1 մեկնաբանությունում սահմանված է.

«Գործող օրենսդրությունը բոլոր սովորողների, ներառյալ հաշմանդամություն ունեցողների համար պետական և մասնավոր ուսումնական հաստատություններում ապահովում է ներառական կրթություն՝ կրթության բոլոր մակարդակներում:

Կրթության բոլոր մակարդակները ներառում են նաև՝

- վաղ մանկություն, տարրական, միջնակարգ, նախնական և միջին մասնագիտական, բարձրագույն կրթություն, մեծահասակների կրթություն և կրթություն ողջ կյանքի ընթացքում:

Իսկ 24.5-րդ, 24.6-րդ և 24.7-րդ կետերով սահմանված են այն նախադրյալներն ու

գործողությունները, որոնք կարող են ապահովել մասնագիտական կրթության համակարգում ներառականության ներդմանն ու իրականացման հիմքերը: Այսպիսով, անդամ երկրներին առաջարկվում է.

1. «24.5....Նախնական և միջին մասնագիտական ու բարձրագույն կրթության, ինչպես նաև ողջ կյանքի ընթացքում ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ազգային ռազմավարական պլանավորումներում ապահովել այնպիսի միջոցառումներ, որոնցում հստակ սահմանված և պլանավորված կլինի հաշմանդամություն ունեցող անձանց ներառումը:

24.6.Կրթության բոլոր մակարդակների մանկավարժների ու մասնագետների համար կազմակերպել ներառական կրթության թեմաներով ծրագրային նյութ, ինչպես նաև շարունակական վերապատրաստումներ: Մասնավորապես՝

- Դասընթացները և վերապատրաստումները պետք է իրականացվեն կրթության բոլոր մակարդակների (տարրական, միջնակարգ, նախնական և միջին մասնագիտական, բարձրագույն կրթություն վարչական աշխատողների, ուսուցիչների և դասախոսների համար:
- Համալսարաններում մանկավարժական դասընթացները պարտադիր պետք է ներառեն ներառական կրթությունն իրենց ծրագրերում:
- Բոլոր մանկավարժական կրթություն ունեցող և մասնագիտությամբ աշխատող դասավանդողները պետք է ներառական կրթության հարցերով վերապատրաստվեն: Վերապատրաստումները կարող են ներառել մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացներ, գիտելիքների թարմացման և խորացման դասընթացներ, առանձին թեմաներով դասընթացներ:
- Ներառական կրթության պարտադիր դասընթացները պետք է ներառեն.

- ներառական մանկավարժություն,

- հաշմանդամության հարցերին մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումների կիրառում՝ համահունչ կոնվենցիայի սկզբունքներին և դրույթներին,

- դասարանի և դպրոցական միջավայրի մատչելիություն.

- ողջամիտ/խելամիտ հարմարեցումների ապահովում,

- հաշմանդամություն ունեցող ուսանողներին աջակցելու համար մատչելի ձևաչափերի, հաղորդակցման այլընտրանքային միջոցների, մատչելի կրթական տեխնոլոգիաների և նյութերի օգտագործում:

Եվ վերջապես ամենահիմնարարը՝

«24.7 Մասնագիտական կրթության պետական չափորոշիչները և ծրագրերը պետք է համապատասխանեն ներառական կրթության ստանդարտներին և թույլ տան ծրագրի ձևափոխում և հարմարեցում սովորողի ներուժին:» ինչպես նաև՝

«24.8. կրթական հաստատությունների ֆիզիկական միջավայրն ու նյութատեխնիկական ռեսուրսները պետք է համապատասխանեն մատչելիության ստանդարտներին, այդ թվում՝ շենքերը, դասարանները, գրադարանը, սպորտային դահլիճը, խաղահրապարակը, ճաշարանը, սանհանգույցները, սարքավորումները և հաղորդակցման բոլոր ձևերը.»:

2015 թվականը գլոբալ զարգացման տեսանկյունից «Հազարամյակի զարգացման նպատակների» իրականացման գործընթացի ամփոփման և զարգացման նոր օրակարգի հաստատման տարի էր: Նախ՝ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունեց «Փոխակերպենք մեր երկիրը. Մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգը» բանաձևը, որով հաստատվեցին կայուն զարգացման նպատակները: Կայուն զարգացման բոլոր նպատակադրումներում կարևորվում է կրթության դերը: Միաժամանակ կրթության բնագավառում սահմանված է առանձին նպատակ. «Ապահովել ներառական ու հավասարապես որակյալ կրթություն և խթանել կրթության հնարավորություններ բոլորի համար ողջ կյանքի ընթացքում»:

Այնուհետև՝ կրթության համաշխարհային ֆորումը ընդունեց «Կրթության 2030. Դեպի ներառական և հավասարապես որակյալ կրթություն և կրթություն ողջ կյանքի ընթացքում բոլորի համար» Ինչհոնի հռչակագիրը: Այն, կարևորելով կրթության դերը, սահմանում է կրթության գլոբալ զարգացման գերակայությունները. մատչելիություն, համընդհանուր ներառում և միջոցների արդարացի բաշխում, որակ, կանանց և տղամարդկանց հավասարություն, կրթության հնարավորություններ ողջ կյանքի ընթացքում:

Պատրաստվել է նաև Ինչհոնի հռչակագրից բխող գործողությունների շրջանակը սահմանող որոշումը, որն ուղեցուցային է ՄԱԿ-ի անդամ երկրների կրթության զարգացման քաղաքականության մշակման համար:

Միջզգայնորեն սահմանված ներկայիս օրակարգով՝ կրթության զարգացման գլխավոր նպատակն է կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը յուրաքանչյուր քաղաքացու կյանքի բոլոր փուլերում հնարավորություն է տալիս ստանալ իր պահանջմունքներին, մտավոր կարողություններին ու ձգտումներին համապատասխան որակյալ կրթություն, բավարարում է տնտեսության ու հասարակության պահանջները, լիարժեք ծառայում է ազգային շահերին:

2.2 Փոփոխությունների ու բարելավումների անհրաժեշտությունը.

Միջազգային իրավակարգավորումների և գործողությունների վերոնշյալ օրակարգը արդյունավետ կարող է գնահատվել ոչ թե պարզապես դրանց միանալով ու փաստաթղթեր ընդունելով, այլ երբ կրթության մասնակից կամ դրա արդյունքների սպառող ցանկացած շահառու զգա դրա ազդեցությունը իր կյանքի որակի վրա...

ՄԿՈՒ ոլորտում ներառականության ներդմանն ուղղված միջոցառումները և օրենսդրական բարեփոխումները պետք է նպաստավոր լինել մարդու իրավունքների հարգման և հավասարության տեսանկյունից, մասնագիտական կրթությունն առավել նպատակային կազմակերպելու, ֆինանսական միջոցներն առավել արդյունավետ օգտագործելու, սոցիալական հասարակություն և ներառական աշխատաշուկա ձևավորելու տեսանկյունից:

Սա այն դեպքն է, երբ կարող է շահել անձը, ընտանիքը, գործատուն, պետությունը և հասարակությունը: Պետք է ձգտենք, որ վերջնարդյունքում վիճակն այսպիսին լինի: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձը դառնում է բոլորին իրավահավասար մասնակից: Նրա կրթության և հասարակական կյանքին մասնակցությունը իր փոխարեն չեն որոշում, այլ տրվում է հնարավորություն բացահայտվելու իր բոլոր ունակություններով և դրսևորվելու իր համար հաղթահարելի ձևով: Շեշտը դրվում է սովորողի ուժեղ կողմերը զարգացնելու, իսկ թույլ կողմերը ուժեղացնելը իրականացվում է կրթության առանձնահատուկ

պայմանի կարիքը գնահատելու և այդ պայմանը ապահովելու միջոցով: Այսինքն, երեխան ունի, ոչ թե «ֆիզիկական ու մտավոր արատներ» առանձնահատկություններ, այլ տարբեր պատճառներով ունի դժվարություններ՝ կրթությանը լիարժեք մասնակցելու համար: Դա կարող է լինել, ֆիզիկական միջավայրը, տեխնիկական սարքերը, մասնագետի աշխատանքը, ուսուցման մեթոդը և մեթոդաբանությունը, ուսուցողական հարմարեցված նյութերը և այլն:

Արդյունքում՝ սոցիալական խոցելի խմբերի ներկայացուցիչները հնարավորություն կունենան՝

✓ աշխատաշուկայում առավել մրցունակ լինել, քանի որ ներառական կրթության արդյունքում ձեռք կբերեն մասնագիտական որակական արդյունքների շնորհիվ կկարողանան հեշտությամբ ինտեգրվեն սոցիալական նոր միջավայրում,

✓ վարել ինքնուրույն մասնագիտական գործունեություն՝ ապահովելով իրենց բարեկցությունը և սոցիալական ակտիվությունը:

Կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող սովորողի ընտանիքը դադարում է նրա խնամքի ու գործելու սահմանափակումով պայմանավորված սոցիալական բեռը միայնակ կրելուց, խուսափել իր երեխայի հետ միջավայրի շփումից, քանի որ նույն միջավայրը հանդուրժողականությամբ է վերաբերում իր երեխային՝ ընդունելով վերջինիս հավասար լինելու փաստը, համարձակ ուղղորդում է երեխային դեպի մասնագիտացում և աշխատաշուկա՝ քանի որ մասնագիտական ուսումնական հաստատությունները և գործատուն պատրաստ են նրա հետ աշխատել և այլն: Ընտանիքի անդամի հետ տարվող մասնագիտացված աջակցության ծառայությունները, ինչպես նաև երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի գնահատման գործընթացին անմիջական մասնակցությունը, մասնագետների խորհրդատվությունը և միջավայրի վերաբերմունքը կօգնեն ծնողին ավելի օգտակար լինել իր երեխային, դուրս գալ անելանելիության ու ամոթի բարդույթից և օգնել իր երեխային հաղթահարելու անհատական ուսուցման պլանը:

Գործատուները աստիճանաբար վստահում են աշխատանքի առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող մասնագետին, քանի որ առաջնային կարծրատիպերը փոփոխվում են կրթության հետ համագործակցության արդյունքում, որը հնարավորություն է տալիս տեսնել ու ճանաչել մասնագետի իրական հնարավորությունները, նրանց առանձնահատկություններով պայմանավորված ուժեղ կողմերը:

Պետությունն աստիճանաբար հաղթահարում է սոցիալական պետության իր խնդիրը. նվազում է հասարակության շերտավորումը և դրանով կարողանում է կատարել երկրի ստանձնած միջազգային հիմնական պարտավորությունները, հասնում է բյուջետային միջոցների արդյունավետ ու նպատակային բաշխմանը, քանի որ հատկացումները կատարվում են ավելի մեծ թվով երեխաների կրթությունը կազմակերպելու, յուրաքանչյուր երեխայի մասնագիտություն ստանալու, ոչ թե սոցիալական խնդիր լուծելու համար: Սովորողների շրջանում իրավահավասարություն ապահովումը հանգեցնում է ստեղծագործական հնարավորություններով ու ինքնուրույն գործելու պատրաստ մարդու ձևավորմանը:

Հասարակությունը գնում է հոգեբանական առողջացման. նվազում է սոցիալական շերտավորումը, անձի կախվածությունը որոշում կայացնողներից: Մարդն ինքն է ընտրում՝ լինել նպաստառու, թե հարկատու:

Ներառականության տրամաբանությամբ օրենսդրական բարելավումներով հնարավոր է դառնում երկրում մասնագիտական կրթության կազմակերպման և իրականացման մեխանիզմների արդիականացումը, որոնք համահունչ են ժամանակակից մարտահրավերների կարգավորմանն ուղղված միջոցառումներին:

Ներկայումս խնդիր է դրված ապահովել անձի կրթության իրավունքը՝ անկախ նրա անհատական ցանկացած տարբերությունից:

2.3 Իրականացվելիք միջոցառումները.

Վերոնշյալ հիմնախնդիրները լուծելու, միջազգային պարտավորությունները ապահովելու և ներառական կրթության միջոցով ներառական հասարակություն ձևավորելու համար համապատասխան հիմքերն ու մեխանիզմները պետք է ամրագրվեն մի շարք ներպետական իրավական ակտերում և քաղաքականության փաստաթղթերում: Մասնավորապես՝

- «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքում,
- «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-164-Ն օրենքում,
- «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 1993 թվականի ապրիլի 14-ի ՀՆ-0800-1-ՀՕ-57 օրենքում,
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թ. մայիսի 18-ի «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում 2020-2021 ուսումնական տարվա առկա (ստացիոնար) ուսուցմամբ ընդունելության և 2019-2020 թվականի շրջանավարտների պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 08-ն հրամանում,
- ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թ-ի ապրիլի 5-ի «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատելու մասին» թիվ 254-Ն հրամանում,
- Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհուրդի 2019թ. հունիսի 25-ի նիստում հաստատված Հայաստանում աշխատանքի վրա հիմնված ուսումնառության զարգացման հայեցակարգը և 2019-2025թթ. գործողությունների ցանկում:
- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագիր ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978 - L որոշման մեջ (61-րդ կետ «Ընդունել ներառական կրթության ապահովման ռազմավարություն և գործողությունների ծրագիր՝ կրթական բոլոր մակարդակների համար»):

3

ՄԿՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՌԿԱ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

ՄԿՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՌԿԱ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Ստորև ներկայացվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերլուծության արդյունքները՝ ներառական կրթության ապահովման համատեքստում:

3.1 ՄԿՈՒ ոլորտում ներառականության սահմանումը

*Հանրակրթության ոլորտի նախադեպից ելնելով, **ներառումը** յուրաքանչյուր սովորողի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության ապահովումն է: ՄԿՈՒ ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված՝ պետք է ներառականության սահմանումը ընդգրկի նաև աշխատանքային միջավայրը, մասնագիտական աշխատանքային հմտությունները կատարելու համար անհարաժեշտ պայմանները: Ստացվում է, որ մասնագիտական կրթության ապահովման ներառական մեթոդաբանության ապահովումը հետագայում իրական հիմքեր կարող է ստեղծել ներառական աշխատանք կազմակերպելու համար:*

Հետևաբար՝ ներառական կրթությունը չպետք է դիտարկել որպես համատեղ կրթության հնարավորություն, այլ կրթական գործընթացին մասնակցություն ապահովելու պայման, երբ մասնագիտական կրթության պատասխանատուները սովորողի համար ստեղծում են կրթության և աշխատանքի մատչելի միջավայր՝ ֆիզիկական հասանելիության, մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական աշխատանքի, հարմարեցված գործնական խնդիրների միջոցով, ապահովում են գործընթաներում ընդգրկվելու և լիարժեք մասնակցության ունենալու հնարավորություն:

Այս դեպքում՝ կրթության առանձնահատուկ պայմանները այն միջավայրն ու միջոցներն են, որոնք նպատակաուղղված են անձի մասնագիտական ծրագրի յուրացմանը, այդ թվում՝ մասնագիտական աշխատանք կատարելու հմտությունների ձևավորմանը: Հետևաբար՝ ներառական կրթությունը դիտվում է ոչ թե առանձին կատեգորիայի տեր անձանց կրթության ձև, այլ յուրաքանչյուր սովորողի (այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ) կրթական ծրագրի մատչելիությունն ու յուրաքանչյուրի մասնակցային հնարավորությունն առավելագույնս ապահովելու գործընթաց: Այս մոտեցման հիմքում ենթադրվում է, որ դասավանդողն ու հրահանգիչը պետք է տեսնի սովորողի կրթական հնարավորությունները և զարգացնի դրանք:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է ներառական մասնագիտական կրթության իրականացնելու իրավահարաբերություններում սահմանել հիմնական հասկացությունները՝ հետևյալ կերպ.

1) ներառական կրթություն՝ յուրաքանչյուր ուսանողի և ունկնդրի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական և մասնագիտական աշխատանքային գործընթացին առավելագույն մասնակցության և յուրաքանչյուր մասնագիտության պետական չափորոշիչով կամ մասնագիտական ու-

սուցման ծրագրով սահմանված արդյունքի ապահովում.

2) կրթության առանձնահատուկ պայմաններ՝ անձի մասնագիտական կրթության և ուսուցման յուրաքանչյուր ծրագրի ուսումնառության արդյունքների ձեռք բերմանը նպատակաուղղված մոդուլային ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման և աշխատանքի անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված կրթական և աշխատանքային միջավայրի, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջություն.

3) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ՝ ուսուցման և մասնագիտական աշխատանքի կատարման հետ կապված դժվարություններ ունեցող անձ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող, որի կողմից յուրաքանչյուր մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրերը ուսումնառության արդյունքները և կատարման չափանիշները, այդ թվում՝ աշխատանքային գործնական ուսուցման արդյունքները ապահովելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ.

3.2 ՄԿՈՒ ոլորտում ներառականության ապահովումը

Ներկայումս մասնագիտական կրթությունը կազմակերպվում է յուրաքանչյուր մասնագիտության կրթական պետական չափորոշչի և դրա մոդուլային ուսուցման ծրագրի միջոցով: Դրանց հիման վրա յուրաքանչուր ուսումնական հաստատություն իրավունք ունի սահմանել իր մոդուլային ուսումնառության ծրագիրը և ուսումնական պլանը: Մոդուլային ուսումնական ծրագրի առավելությունը այն է, որ մոդուլների դասավանդումը միտված է յուրաքանչյուր սովորողի մասնագիտական կարողությունների ձևավորմանը և խնդիրն է անհատական աշխատանքի միջոցով յուրաքանչյուրի կողմից ուսումնառության արդյունքների ձեռք բերումը: Այն խիստ համահունչ է ներառական կրթության գաղափարախոսությանը, որտեղ ասվում է, որ անձի անհատական կարիքների և հետաքրքրությունների հիման վրա յորաքանչյուրի հետ անհատական աշխատանքի արդյունքում է հնարավոր հասնել յուրաքանչյուրի կողմից կրթական արդյունքների ձեռքբերմանը:

Սակայն օրենսդրությունը պետք է հնարավորություն տա ապահովել ճկուն մեթոդներ և ճանաչել այնքան արդյունք, որքանը ամբողջական է և սովորողը՝ այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողը, կարողացել է հաղթահարել՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի ցանկացած տարբերությունը: Բացի դրանից՝ սովորողի արդյունքների ձեռք բերումը և սահմանված չափանիշների հաղթահարումը պետք է դիտարկել որպես մանկավարժական անձնակազմի խնդիր:

Յուրաքանչյուր նախնական կամ միջին մասնագիտության կրթության պետական չափորոշիչ մշակելու ընթացքում պետք է հաշվի առնել սովորողների այն լայն շրջանակը, որոնք կարող են «տեղավորվել» կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձի կարգավիճակի մեջ: Նրանք կարող են լինել խորը մտավոր ու ֆիզիկական դժվարություններ ունեցող անձից մինչև բացառիկ ունակություններով օժտված անձը, տարբեր մշակութային և կրոնական արժեքներ կրող անձանցից, մինչև լեզվական խնդիրներ ունեցող ներգաղթյալը: Հետևաբար՝ մասնագիտական կրթական ծրագրերը պետք է հաղթահարելի և արդյունավետ լինեն նաև ԿԱՊԿՈՒ սովորողի

համար՝ թույլ տալով առավելագույնս յուրացնել ծրագիրը: Այն պետք է լինի ճկուն և ունենա մեծ դիապազոն՝ ընդգրկելով որևէ դժվարություն ունեցող սովորողներին ներկայացվող պահանջներից մինչև արտակարգ ընդունակություններով օժտված երեխաների կրթական կարիքների բավարարում: Կրթությունը մեկն է, անձի կարիքներն են տարբեր և չափորոշիչը պետք է ներառի անձի կարողությունների ամենալայն հնարավորությունները (դիապազոնը):

3.3 Կրթության աջակցության ծառայությունների համակարգի ներդումը ՄԿՈՒ համակարգում.

Ներառական կրթության հիմնարար սկզբունքներից մեկը այն է, որ ԿԱՊԿՈՒ անձանց կրթության ապահովման համար կիրառվեն կրթությանն աջակցող միջոցառումները, այսինքն այնպիսիք, որոնք կնպաստեն կրթական ծրագրին սովորողի մասնակցությանն ու արդյունքների ձեռք բերմանը: Հետևաբար, կրթության համակարգում սոցիալական բնույթի աջակցությունները կամ արտոնությունները, պետք է աստիճանաբար փոխարինվեն կրթությանն աջակցող ծառայություններով, ըստ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների: Նման համակարգ արդեն ներդրվել և կիրառվել է հանրակրթության ոլորտում, նախ՝ մասնագիտածված աջակցության ծառայություններ սահմանելով ուսումնական հաստատությունում, իսկ հետագայում՝ «Հանրակրթության մասին» օրենքի ընդունումով ոլորտում գործարկվել է կրթությանն օժանդակող ծառայությունների եռաստիճան համակարգ: Դիտարկելով միջնակարգ կրթության նախադեպը, պարզ է դառնում, որ այն պետք է մուտք գործի նաև նախնական և միջին մասնագիտության կրթության համակարգ: Նախադեպն այսպիսին է.

Երեխայի ուսումնառության ընթացքում հաշվի է առնվում նրա կրթական դժվարությունները կամ առավելությունները, այսինքն այն հանգամանքներն ու պատճառները, որոնցով պայմանավորված երեխան դժվարանում է հաղթահարել սահմանված ծրագիրը կամ ավելի արագ և շատ է յուրացնում, քան նախատեսված է որպես նորմատիվային: Ուսումնառության ընթացքի դիտարկումների արդյունքում մանկավարժի և (կամ) մասնագետի կողմից կատարվում է իրավիճակի գնահատում:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի կենտրոնացված գնահատումից անցում է կատարվել եռաստիճան գնահատման համակարգի՝ դպրոցում, տարածքային և հանրապետական հոգեբանամանկավարժական կենտրոնների միջոցով:

Ծառայությունները կարող են կազմակերպվել թե՛ ուսումնական հաստատության ներսում, թե՛ հրավիրված համապատասխան մանագետի կողմից, և թե՛ տարածքային ու հանրապետական հոգեբանամանկավարժական կենտրոններում:

Այս համակարգը չի գործում ՄԿՈՒ-ների համակարգում, նույնիսկ այն դեպքում, որ ՄԿՈՒ-ներում իրականացվող մասնագիտական ծրագրերի մեծ մասը մեկնարկում է հիմնական կրթության հիմքով: Դա առաջ է բերում խտրական վերաբերմունք գոնե այն մասով, որ Հայաստանում սահմանված է 12-ամյա պարտադիր միջնակարգ կրթության պահանջը՝ սովորողներին տալով ուսումնառության ձևը, ծրագիրը և հաստատությունը ընտրելու լայն հնարավորություն: Քանի որ միջնակարգ կրթության երրորդ աստիճանի ծրագիրը կարող է ստանալ նախնական կամ

միջին մասնագիտական կրթության այն ուսումնական հաստատություններում, որտեղ առկա է իրենց նախընտրած մասնագիտության ուսուցանումը հիմնական կրթության հիմքով: Ստացվում է, որ նույն տարիքային խմբի և նույն ծրագրին մասնակից երեխաները (16-18 տարեկան) դպրոցում սովորելու դեպքում կարող են օգտվել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններից, իսկ քոլեջում կամ ուսումնարանում սովորելու դեպքում՝ ոչ: Սակայն, դա չի ենթադրում, որ դրանք չեն կարող կազմակերպվել պետական բյուջեի միջոցների հաշվին:

Իհարկե օրենսդրությունը չի սահմանափակում և ՄԿՈՒ ՈՒՀ-ը կարող է կրթական կարիքներին համապատասխան ընտրել ծառայության տեսակը և իր միջոցներով կազմակերպել դրանք:

Ընդհանուր առմամբ դա աստիճանաբար լուծվող խնդիր է: Որպես առաջնային անհրաժեշտության խնդիր, որոշակի ծառայություններ պետք է ներդվեն պետական միջոցների հաշվին: Կարգավորելով դպրոցի և ՄԿՈՒ-ի միջև առկա խտրականությունը, առնվազն հնարավոր կլինի ՄԿՈՒ-ները նախընտրած երեխաների համար կիրառել *մանկավարժահոգեբանական ծառայությունների համակարգը, որը ի տարբերություն առողջական հիմքի, կառուցվում է անձի իրական կարողությունների բացահայտման ու զարգացման վրա*: Դա կնպաստի *շարունակական և մատչելի կրթական համակարգի ձևավորմանը, կրթության իրականացմանը, կապահովի կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը: Միաժամանակ մեծ աջակցություն կլինի բարձր կուրսերում դասավանդողների համար:* ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատող բազմամասնագիտական թիմի համագործակցությունը ՄԿՈՒ-ի մանկավարժական մյուս աշխատողների հետ, ժամանակի ընթացքում դրականորեն վերափոխում է թիմի տեխնիկական գործառույթները՝ նրան վերածելով բազմապրոֆիլ, յուրաքանչյուր սովորողի համար անհատականացված ծառայություններ մատուցող կառույցի: Այդ հեռանկարը յուրաքանչյուր (այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանի կարիք չունեցող) սովորողի անհատականացված կրթական կարիքի սպասարկման այն հնարավորությունն է, որը կնպաստի ներառական կրթության համատարած կազմակերպմանը:



3.4 ՄԿՈՒ ոլորտում ներառական կրթության կազմակերպման ֆինանսավորման հիմքերի սահմանումը, պետական բյուջեի միջոցներից հատկացումների ուղղությունները.

Ներկայումս նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտի ֆինանսավորման հըստակ բանաձևի, ինչպես նաև ներառական կրթության կազմակերպման մեխանիզմի բացակայությունը, էականորեն սահմանափակում է համընդհանուր ներառմանն ուղղված միջոցառումների և կրթությանն ու սոցիալական ծրագրերի չհիմնավորված ծախսերին ուղղված պետական միջոցների ոչ ռացիոնալ օգտագործման:

Համաձայն «Կրթության մասին օրենքի» 46-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝

«2. Պետությունը յուրաքանչյուր նոր ուսումնական տարում երաշխավորում է կրթության կարիքների համար միջոցների հատկացումը՝ նրա առաջանցիկությունն ապահովող չափաքանակով:

3. Պետական բյուջեից պետական ուսումնական հաստատության ֆինանսավորումն իրականացվում է պետական պատվերի, սուբսիդիայի, պետական սեփականություն հանդիսացող գույքի պահպանության վճարի և այլ ձևերով: Պետական պատվերով ուսումնական հաստատության ֆինանսավորման չափանիշները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ մեկ սովորողի հաշվարկով՝ ըստ ուսումնական հաստատության տիպի, իսկ առանձին դեպքերում (լեռնային և սահմանամերձ շրջաններ)՝ հատուկ չափաքանակներով:

Նշված հատվածից պարզ է դառնում, որ բոլոր ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը կատարվում է մեկ սովորողի հաշվով, իսկ հատուկ չափաքանակ կարող է հատկացվել առանձին դեպքերում: Տվյալ դեպքում՝ լեռնային և սահմանամերձ շրջանների հաստատություններին: «Հանրակրթության մասին» օրենքով նախատեսվում է նաև բարձրացված չափաքանակով ֆինանսավորում՝ հաշմանդամություն ունեցող անձանց առանձին կարգավիճակների դեպքերում:

Մասնագիտական կրթության պարագայում առկա խնդիրն այն է, որ ընդհանուր առմամբ սահմանված չէ մեկ սովորողի հաշվով ֆինանսավորման մեխանիզմը, այդ թվում նաև՝ ԿԱՊԿՈՒ անձի աջակցության ծառայությունների ծախսերը: Չափելի և գնահատված չէ նախ՝ յուրաքանչյուր «մասնագիտության արժեքը», հետևաբար նաև այդ ծրագրով ուսումնառով մեկ սովորողի ծախսատարությունը հիմնավոր չէ: ԿԱՊԿՈՒ անձանց համար նպատակահարմար է ներդնել առնվազն անհատական ուսուցման պլան աշխատելու պայմանը, որն առանձին դեպքերում կարող է առաջացնել բարձրացված չափաքանակով ֆինանսավորման և աջակցության այլ ծառայությունների անհրաժեշտություն: Հետևաբար՝ ՄԿՈՒ ֆինանսավորման բանաձևում հըստակ անհրաժեշտ է ամրագրել ԿԱՊԿՈՒ անձանց ծառայությունների ապահովման ծախսերը, այդ թվում՝ օգնականի հաստիքի ծախսերը:

Անդրադառնանք նաև ՄԿՈՒ ՈՒՀ-ներում ԿԱՊԿՈՒ անձանց ուղղված նյութատեխնիկական բազայի և մատչելի միջավայրի ապահովման խնդիրներին: Համաձայն «Կրթության մասին օրենքի» 48-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի՝

«2. Ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազան, կախված այդ հաստատությունների տիպերից և ձևերից, ներառում է սովորողների համար անհրաժեշտ տա-

ռածքներ, կառույցներ, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսուցման համար անհատական տեխնիկական միջոցներ և սարքավորումներ, համակարգչային դասարաններ:

4. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության նյութատեխնիկական և գիտամեթոդական միջոցներով ապահովումը ֆինանսավորվում է պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:»

Նշված դրույթները կարծես բավարար հիմք են՝ ապահովելու համար կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող կրթությունն ապահովող հիմնական նյութատեխնիկական բազան և միջավայրը:

Սակայն փաստացի տվյալներով, օրենքով սահմանված պայմանները որոշակիորեն կիրառվում է միայն միջնակարգ կրթության ընդհանուր և հատուկ ուսումնական հաստատությունների դեպքում: ՄԿՈՒ ՈՒՀ-ի համար այս նպատակով որևէ ֆինանսավորում չի հաշվարկված:

Հետևաբար, ներառական մասնագիտական կրթության ներդման համար անհրաժեշտ է նախ օգտագործել առկա օրենսդրության հնարավորությունները և տարեկան պետական բյուջեի ծրագրերում հաշվարկել նշված ծախսերի հատկացումը՝ առնվազն այն հաստատությունների համար, որտեղ ուսումնառում են ԿԱՊԿՈՒ անձինք և որտեղ իրականացվում է աջակցության ծրագրեր:

Հաշվի առնելով ՄԿՈՒ համակարգում ներառական կրթության ֆինանսավորման առանձնահատկությունները, նպատակահարմար է ճշգրիտ հաշվարկել պետական բյուջետային ներդրումների չափը և համընդհանուր ներառականության հնարավորությունը՝ բոլոր ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում: Այս դեպքում չպետք է գնալ միայն ֆինանսական միջոցներ խնայելու ուղղությամբ, այլ կարևորել որակյալ կրթության ապահովումը: Առավել նպատակահարմար կլինի ներառական կրթության իրականացումը սկսել տարածաշրջանային, ինչպես նաև առանձին, համապատասխան պայմաններ ու որոշակի փորձ ունեցող ՄԿՈՒ հաստատություններում, իսկ մյուս ՄԿՈՒ հաստատություններում առայժմ **տարածել հաշմանդամություն ունեցող անձանց կրթության կազմակերպման ինտեգրատիվ մոտեցումները:**

3.5 ՄԿՈՒ ՈՒՀ ընդունելության գործընթացի բարելավում, արտոնությունների համակարգի ընդլայնում՝ նախնական մասնագիտական կրթության մակարդակի համար.

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ «Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած հաշմանդամներն այլ հավասար պայմանների դեպքում օգտվում են պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվելու առաջնահերթ իրավունքից»:

Դրույթը, սակայն չի գործում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների ընդունելության պարագայում, որի պատճառով հաշմանդամություն ունեցող շատ երիտասարդների համար հաղթահարելի չէ ընդհանուր մրցույթի անցողիկ շեմը,

իսկ նրանց հիմնական մասը, սոցիալական խնդիրների պատճառով վճարունակ չէ և զրկվում է արհեստագործական կրթություն ստանալ, ինչպես նաև աշխատանքի միջոցով արժանապատիվ կյանք վարելու հնարավորությունից:

Օրենքի վերոգրյալ դրույթը, չնայած, համահունչ չէ կոնվենցիայի 24-րդ հոդվածի դրույթներին, պարունակում է խտրականության որոշ տարրեր՝ այլոց համար սահմանված մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելիության կարգավորումների հետ համեմատելիս, սակայն, մյուս կողմից, կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասում ասվում է. «Այն կոնկրետ քայլերը, որոնք անհրաժեշտ են՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար դե ֆակտո հավասարության հասնելու ու այդ գործընթացը արագացնելու համար, չեն կարող դիտվել որպես խտրականություն՝ սույն հոդվածի համաձայն»:

Ուստի այս տեսանկյունից, փաստորեն, պետությունը մասնավոր, բայց ոչ բավարար քայլեր է ձեռնարկել՝ նպաստելու մասնագիտական կրթություն ստանալու հնարավորության ստեղծմանն ու մատչելիությանը:

3.6 Ծնողական և մասնագիտական թիմերի աջակցությունը համակարգի գործարկումը՝ ՄԿՈՒ ոլորտում

«ՄԿՈՒ ՈՒՀ-ներում կրթության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ուսանողների, նրանց ծնողների, մանկավարժական աշխատողների, սոցիալական գործընկերներին և մասնագիտական ոլորտի գործատուներին, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում կրթական գործընթացին մասնակից այլ անձանց համար նպատակահարմար է ապահովում է ուսանողի կրթությանն ու աշխատանքին օժանդակող խորհրդատվական ծառայություններ՝ տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլն: Մասնագիտացված կրթական աջակցության ձևերի կազմակերպման կարգը կարող է սահմանել կրթության պետական կառավարման լիազորված մարմինը»

Դասավանդողների և գործատուների համար էական նշանակություն ունի երեխայի մինչ ուսանող հրամանագրվելը անցած կրթական թղթապանակը կամ անհատական ուսումնական պլանները և ծնողի հետ աշխատանքի շարունակաությունը, փոխադարձ խորհրդատվությունների տրամադրումը: Հատկապես՝ մասնագիտական կրթական ծրագրի մասնակցության շրջանակում ՄԿՈՒ ԱՈՒՊ-ի մշակման աշխատանքների կատարման աշխատանքներում:

Հետևաբար՝ օրենսդրությամբ պետք է ամրագրվի ուսանողի ծնողին, գործատուներին, մանկավարժներին և կրթության այլ մասնակիցների խորհրդատվություն տրամադրելու, ՄԿՈՒ ԱՈՒՊ սահմանելու և ծնողների հետ համագործակցելու հիմքերը:

3.7 ՄԿՈՒ ոլորտում ԿԱՊԿՈՒ անձանց մասնագիտական խորհրդատվության կազմակերպման մեթոդաբանության սահմանումը.

Ներկայումս ՄԿՈՒ ՈՒՀ-ներում գործում է կարիերայի պատասխանտուի հաստիքը, որի աշխատանքներն առավել կենտրոնացած են սովորողներին դեպի աշխատաշուկա ուղղորդելու գործառույթին: Նախատեսվում է նաև որոշակի մասնագիտական ուղղորդման աշխատանքներ իրականացնել ընդունելության գործընթացում, սակայն 2020-2021թթ ընդունելության կենտրոնացված էլեկտրոնային հարթակի ներդումը ռիսկային դարձրեց անմիջական շփման և դիմորդի մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը:

Բոլոր հաջողություններով ու անհաջողություններով հանդերձ, նման ծառայության առկայությունը ՄԿՈՒ ՈՒՀ-ներում հնարավորություն է տալիս կատարելագործել ծառայությունը՝ դրանում ամրապնդելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց հետ որոշակի մեթոդաբանություն կիրառելու հմտությունները: Արդյունավետության հասնելու համար անհրաժեշտ է աշխատանքներ կատարել հետևյալ գործողություններով.

- ✓ Մշակել ԿԱՊԿՈՒ անձանց տարբեր խմբերի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, կարիքների գնահատման հարցաթերթ,
- ✓ Անցկացնել հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական կողմնորոշման կարիքների գնահատում՝ մասնագիտական կողմնորոշման գործընթացների կազմակերպման և մեթոդաբանության մշակման նպատակով;
- ✓ Մշակել ԿԱՊԿՈՒ անձանց տարբեր խմբերի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, մասնագիտական կարողությունների (ներառյալ հոգեֆիզիոլոգիական) որոշման մեթոդոլոգ և ըստ դրա տրամադրել խորհրատվություն՝ նրանց ՄԿՈՒ համակարգի մասնագիտություններ կողմնորոշելու համար,
- ✓ Հաշմանդամություն ունեցող անձանց մոտիվացիայի զարգացմանն ուղղված համալիր ծրագրի իրականացում՝ գործոնների հետազոտման և գործողությունների պլանի մշակման ճանապարհով,
- ✓ Ներառական կրթության իրականացման հնարավորության ու դրա պայմանների վերաբերյալ իրազեկում՝ ՄԿՈՒ հաստատությունների կողմից անցկացվող մասնագիտական կողմնորոշման (գովազդի) աշխատանքներում:

Օրենսդրության մանրամասն վերլուծություն կատարվել է առանձին հավելվածով՝ ներկայացնելով գործող օրենքի դրույթը, դրանով ընձեռած հնարավորությունների և խնդիրների մեկնաբանությունները, առաջարկվող կարգավորումները */մանրամասները տես հավելված 2-ում/*:



4

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԿՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԿՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նկատի ունենալով ՄԿՈՒ կարևորությունը պետության, աշխատաշուկայի, հասարակության բոլոր խմբերի ու շերտերի զարգացման գործում՝ նախատեսվող միջոցառումները պետք է փորձարկվեն, դիտարկվեն, վերլուծվեն, ճշգրտվեն և հանրապետությունում ներդրվեն աստիճանաբար: Բոլոր գործողություններում պետք է ջանալ, որ *ՄԿՈՒ համակարգում ներառական կրթության կազմակերպումը չվերածվի խտրական միջավայրի, որտեղ կարող է տուժել որակյալ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության ապահովումը: Գործողությունները պետք է միտված լինեն բնակչության առավել խոցելի խմբերի մրցունակության բարձրացմանը աշխատաշուկայում, նպաստեն նրանց սոցիալական ներառմանն ու արժանապատիվ կյանքով ապրելու հնարավորությանը*:

4.1 ՄԿՈՒ ոլորտում ներառական կրթության ներդման ու կազմակերպման առկա նախադեպերի վերլուծության և փորձարարական ծրագրերի իրականացման համար առաջարկվում է՝

- ➢ Ամբողջացնել և վերլուծել ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում տեղական և միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ իրականացված փորձարարական ու թիրախային ծրագրերը.
- ➢ Նախադեպերի ու ՄԿՈՒ ոլորտում առկա փորձի հիման վրա մշակել ՄԿՈՒ ՈՒՀ-ներում ներառական կրթության ներդման մարզային փորձարարական մոդելներ: Այդպիսին կարող է լինել Տավուշի մարզի օրինակը, որպես համընդհանուր հանրակրթության հենքի վրա փորձակված օրինակ.
- ✓ կազմակերել մարզի ՄԿՈՒ դասավանդողների ներառական կրթության տեսության և կիրառման հարցերով վերապատրաստումներ,
- ✓ կատարել մարզում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, երիտասարդների հայտնաբերման, տվյալների հավաքագրում,
- ✓ կազմակերպել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ աշխատող դասավանդողների կողմից անհատականացված ծառայություններ մատուցելու և մեթոդամանկավարժական հմտությունները զարգացնելու դասընթացներ, անցկացվել համատեղ գործնական պարապմունքներ,
- ✓ իրականացնել կարճաժամկետ մասնագիտական ուսուցման դասընթացներ՝ մարզի աշխատաշուկային համապատասխան մասնագիտական որոշակի կարողություններ ձևավորելու և աշխատանքի տեղավորելու ուղղությամբ: Աշխատանքի հիմքում առաջնորդվել երիտասարդի մասնագետի ուժեղ կողմերը զարգացնելու սկզբունքը՝ ըստ իր նախընտրած զբաղմունքի:

4.2 Օրենսդրության և ռազմավարական փաստաթղթերի լրամշակմանն ու ստեղծմանն համար առաջարկվում է.

- մշակել Կրթության 30. Հռչակագրի նախապայմանները ՄԿՈՒ ոլորտում ապահովող ռազմավարությունը և գործողությունների պլանը,
- Մշակել «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց մասնագիտական կրթություն և ուսուցման համակարգի 2018-2022 թթ. զարգացման ծրագիրը» ,
- Վերանայել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը և ենթաօրենսդրական ակտերը՝ ապահովելու համար.
  - ✓ ՄԿՈՒ ոլորտում ԿԱՊԿՈՒ անձի ներառական կրթության հետ առնչվող հասկացությունների եզրույթները սահմանելու, կանոնակարգելու հարցերը,
  - ✓ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների ներդումը,
  - ✓ մասնագիտական աջակցության ծառայությունների կազմակերպումը,
  - ✓ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ տարին առնվազն մեկ անգամ տարածքային սպասարկման առողջապահական կազմակերպությունում բժշկական հետազոտություն անցնելու հիմքերը,
  - ✓ կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման մեխանիզները, այդ թվում՝ ֆիզիկական, նյութատեխնիկական, ուսումնական, մեթոդական և այլն,
  - ✓ մասնագիտացված հաստիքների՝ դասախոսի ու վարպետի օգնականի, հոգեբանի, հատուկ մանկավարժների, սոցիալական աշխատողի և այլ հաստիքներ սահմանումը,
  - ✓ ՄԿՈՒ ֆինանսավորման մեխանիզմներում (բանաձևում) սահմանել ՄԿՈՒ ՈՒՀ սովորողների ներառական կրթություն կազմակերպելու հետ կապված ծախսերի հաշվարը և նախատեսել ֆինանսավորման բարձրացված չափաքանակ՝ ԿԱՊԿՈՒ վկայագրված անձանց առանձին կարգավիճակների համար,
  - ✓ մասնագիտական կրթության պետական չափորոշիչների բաղադրիչներում՝ ԿԱՊԿՈՒ անձի ներառման պայմանների ամրագրումը, այդ թվում՝ անհատական ուսումնական պլանի կիրառման միջոցով,
  - ✓ ԿԱՊԿՈՒ անձի մասնագիտական կողմնորոշման կարիքների գնահատման, մասնագիտական խորհրդատվության և ուղղորդման մեխանիզմերը,
  - ✓ ընդունելության և պետական ամփոփիչ ստուգման կազմակեպման, իրականացման գործընթացներում ԿԱՊԿՈՒ անձնաց մասնակցությունը և հարմարեցումը ապահովող հիմքերը,
- Բոլոր մասնագիտությունների պետական կրթության չափորոշիչներում և մոդուլային ծրագրերում՝ զբաղմունքի նկարագրերի և աշխատանքային պարտականությունների, ուսուցման տևողության, միջավայրային պայմանների, գործնական պարապմունքների և պրակտիկաների կազմակերպման ձևաչափերը պլանավորելու ժամանակ՝ սահմանել դրանք կրթության և աշխատանքի առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հասանելի դարձնելու հանգամանքը,

- Մեծացնել դասընթացների և ուսուցման մոդուլների ճկունությունը ինչպես բովանդակային, այնպես էլ ժամանակային առումով,
- Մասնագիտական կրթության և գործնական պարապմունքների կազմակերպումը հնարավոր դարձնել՝ Բրայլի, շարժուձևերի կամ հաշմանդամություն ունեցող անձի համար մատչելի այլ հաղորդակցման ձևով (լեզվով),
- Ներմուծել ներառական կրթության հայեցակարգը ՄԿՈՒ և ուսուցիչների նախապատրաստական դասընթացներում,
- Կարողությունների զարգացման վրա հիմնված ՄԿՈՒ մոդելային ուսուցման ծրագրերի կիրառումը՝ հավելելով ներառական կրթության առանձնահատկությունները,
- Մշակել յուրաքանչյուր մասնագիտության աշխատանքի նոր նկարագիր, որում հաշվի կառնըվեն անձի զարգացման առանձնահատկությունները, սոցիալականացման խնդիրը և այլն,
- ՄԿՈՒ դասընթացները մշակել հաշվի առնելով ոչ միայն ակադեմիական առարկաների ուսուց-ման (օրինակ՝ աշխատանքի հետ առնչվող մաթեմատիկայի դասեր), այլ փափուկ հմտությունները,
- Դասընթացներում կիրառել բիզնես վարելու, հաղորդակցության և փափուկ հմտություններ,
- Մշակել սոցիալական գործընկերների և գործատուներին՝ ԿԱՊԿՈՒ անձանց տարբեր խմբերի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, պրակիկայի և աշխատանքի ընդունելու համար,

4.3 ՄԿՈՒ ՈՒՀ մանկավարժական աշխատողների և գործատու կազմակերպության հրահանգիչների կատարելագործման համար առաջարկվում է.

Ներառական կրթութան հաջողությունը մեծապես կախված է մասնագիտական անձնակազմի պատրաստվածության աստիճանից և վերաբերմունքից: Հետևաբար առանձնակի անդրադարձ կատարենք վերապատրաստման աշխատանքների կազմակերպմանը: Մասնավորապես՝

- Մշակել դասընթացի ծրագիրը մոդուլային ուսուցման ձևաչափով՝ պարտադիր անցկացնելով մասնակիցների գնահատում և ձեռք բերված փաստացի արդյունքների վկայագրում,
- Դասընթացները կազմակերպել կրթության պատասխանատուների համատեղ մասնակցությամբ՝ ընդգրկելով կրթության և բիզնեսի ներկայացուցիչներին (պրակտիկայի պատասխանատուին, հրահանգչին), քանի որ յուրաքանչյուր մասնագիտության ծրագիր ունի իր առանձնահատկություններն ու մասնագիտական մոտեցումները.
- Որոշակի թիրախ խմբի համար մշակված մոդուլային ծրագրում սահմանել առանցքային և փափուկ հմտությունների բաղադրիչը՝ հաշվի առնելով նաև ԿԱՊԿՈՒ անձանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու առաձնահատուկ մոտեցումները,
- Որպես դասընթացի իրականացման գործնական բաղադրիչ (պրակտիկա) ՝ կազմակերպել աշխատանք հանրակրթական հատուկ ուսումնական հաստատություններում և զարգացման կենտրոններում,

- Հաշվի առնել լսարանի չափերը և գործնական դասընթացների ժամանակ տրամադրել անհրաժեշտ հավելյալ աջակցությունը՝ ապահովելու ուսուցման լավագույն արդյունքներ,
- Զարգացնել ուսումնական պլանի և անհատական պլանների մշակման և դրանց հետ աշխատելու հմտություններ, ինչպես նաև ԿԱՊԿՈՒ անձի ունեցող դասարանում դասը պլանավորելու և աշխատելու հմտություններ (սովորողի ուժեղ կողմերը աշխատացնելու, համակուրսեցիների հետ սոցիալականացումը ապահովելու, համատեղ աշխատելու և այդ աշխատանքում սովորողի առավելությունները գնահատելու հմտությունները),
- Գնահատել վերապատրաստման դասընթացի մասնակիցների ուսուցման նախնական կարիքները և փաստացի վերջնարդյունքերը,
- Լավագույն վկայագրված մասնակիցներին ներգրավել որպես վերապատրաստող,
- Գնահատել տվյալ ուսանողի և խմբի հետ աշխատանքում անհրաժեշտ ֆիզիկական և նյութատեխնիկական միջոցների անհրաժեշտությունը, ուսումնառության նյութերի և գրականության կարիքները,
- Փորձը կիրառել ՄԿՈՒ ոլորտի մասնագիտությունների աշխատաշուկայի ներկայացուցիչների հետ աշխատանքի կազմակերպման վրա:

4.4 Մասնագիտական կրթության ոլորտում ներառականության գաղափարախոսության տարածման և շահառուների շրջանում իրազեկվածության բարձրացման ուղղվությամբ առաջարկվում է.

- Մշակել և կիրարկել ներառական կրթության էության և հիմնական նպատակների մասին տեղեկատվածության բարձրացման մեխանիզմներ՝ ՄԿՈՒ հաստատությունների, ուսանողների, նրանց ծնողների, այդ թվում նաև հաշմանդամություն ունեցող անձանց ծնողների, ինչպես նաև գործատուների համար՝ **պարբերաբար կազմակերպելով աշխատանքային տոնավաճառներ և ցուցահանդեսներ հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությամբ**: **Նպատակահարմար է ընդլայնել համագործակցությունը ՄԿՈՒ հաստատությունների և գործատուների միջև՝ հաշմանդամություն ունեցող անձնանց ուսուցման**, **արտադրական պրակտիկայի կազմակերպման և աշխատանքի տեղավորման գործընթացներում:**
- ՄԿՈՒ համակարգում ներառական կրթության ներդրման, իրականացման և այլ նախաձեռնությունները մշակել հասարակայնորեն բաց և թափանցիկ մթնոլորտում: Արդյունքները ցանկալի է, որ ներկայացվեն հանրային քննարկումներում՝ պետական, հասարակական և միջազգային կառույցների մասնակցությամբ: Հասարակական և միջազգային կառույցները ցանկալի է, որ հատուկ ուշադրություն դարձնեն շահառուների շրջանում ներառական կրթության վերաբերյալ համապատասխան դիրքորոշումների և ընկալումների ձևավորմանը: Նմանատիպ գործողություններ պետք է կատարեն նաև ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների տնօրինությունները տեղում՝ ամենօրյա աշխատանք կատարելով իրենց ուսանողների ու նրանց ծնողների հետ՝ **նպաստելով հանդուրժողական**, **ընդունող միջավայրի ձևավորմանը**:

Վերջնարդյունքը

Վերոգրյալ առաջարկությունների հիման վրա իրականացված միջոցառումները, ուղղորդված ՄԿՈՒ համակարգում ներառականության ապահովմանը, հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավման և զբաղվածության ապահովման մոդելով, թույլ կտան ՀՀ ՄԿՈՒ համակարգում բոլորի համար հավասար հնարավորությունների ստեղծման միջոցով համատեղ ուսուցումից անցում կատարելու դեպի ներառական որակյալ կրթության ապահովմանը:

'This study was made with the financial support of the European Union. Its contents are the sole responsibility of World Vision Armenia and do not necessarily reflect the views of the European Union'

Այս ուսումնասիրությունը պատրաստվել Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Վորլդ Վիժն Հայաստանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: